Արձանագրություն N 2

Գլոբալ հիմնադրամի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2022 թվականի կարիքների համար էլեկտրոնային աճուրդով ՀՀ մարզային բժշկական կազմակերպություններում աշխատող բուժքույրերի շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների իրականացման ծառայություններ ձեռք բերելու նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2022/25» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «24» «օգոստոսի» 2022թ.
ժամը 15:00

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի **երկու** անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հասմիկ Հարությունյանը, իսկ քարտուղարն էր՝ Լիլիա Չախոյանը:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Հ. Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ	Ք. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար	Լ. Չախոյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Հարությունյան)

Ընդունել ի գիտություն, որ 10-ը օգոստոսի 2022թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2022 թվականի օգոստոսի 22-ին, ժամը 15:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2022 թվականի օգոստոսի 23-ին ժամը 15:00-ին: 2022 թվականի օգոստոսի 24-ին ժամը 15:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ	-	00508863
2	««Ազգային Բժշկական Պալատ» ՄՄ» ՀԿ	-	00195965
3	«Շարունակական Մասանգիտական Զարգացում» ՓԲԸ	aleksanyannata@gmail.com	02841129

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Հարությունյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Հարությունյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Հ. Հարությունյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 23.08.2022թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են ստորև աղյուսակնում.

h/h	*Մասնակցի անվանումը*	*Չափաբաժին 1՝* ***աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ***		
		Մասնակցի/ների/ կողմից ներկայացված գները		
		Արժեք	*ԱԱՀ*	*Ընդհանուր գին*
1	***«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ***	***15,490,000***	***0%***	***15,490,000***
2	***««Ազգային Բժշկական Պալատ» ՄՄ» ՀԿ***	***15,808,000***	***0%***	***15,808,000***

h/h	*Մասնակցի անվանումը*	*Չափաբաժին 2՝* ***աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ***		
		Մասնակցի/ների/ կողմից ներկայացված գները		
		Արժեք	*ԱԱՀ*	*Ընդհանուր գին*

1	«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ	15,490,000	0%	15,490,000
2	««Ազգային Բժշկական Պալատ» ՄՄ» ՀԿ	15,808,000	0%	15,808,000
3	«Շարունակական Մասանգիտական Զարգացում» ՓԲԸ	141,665,000	20%	169,998,000

h/h	Մասնակցի անվանումը	Չափաբաժին 3՝ **աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ**		
		Մասնակցի/ների/ կողմից ներկայացված գները		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ	6,498,000	0%	6,498,000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին,

(Հ. Հարությունյան)

Հրավերում փոփոխություններ չեն իրականացվել, հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

6. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Հ. Հարությունյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2022/25» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1. «ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ-ն՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Հարությունյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2022/25» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, բոլոր չափաբաժինների մասով հաղթող ճանաչել «ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ-ին և կնքել պայմանագիր:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2022/25» ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր չափաբաժինների համար անգործության ժամկետ սահմանել 25.08.2022թ.-ից մինչև 03.09.2022թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
նախագահ

Հասմիկ Հարությունյան _____

անդամներ՝

Քրիստինե Խաչատրյան _____

քարտուղար՝

Լիլիա Չախոյան _____